


ԱՐՄԵՆ ՍԱՐԳԱՅԱՆ. Արցախի բանահյուսությունը, Երևան, «Էդիթ Պրինտ»
հրատ., 2015, 748 էջ:



Արցախի բանահյուսությունը՝ որպես տվյալ պատմազգագրական տարածքի մտավոր ուժն ու հոգնոր մշակույթի ամփոփող ժառանգություն, հայ բանագիտության տարածքում իր նշանակալի տեղն ու դերն ունի և մշտապես ուսումնասիրության դիտանցքում է՝ սկսած 1860-ական թվականներից: Ծուրջ մեկուկեսդարյա գրավոր կենսագրությամ ընթացքում պեղվել ու գրանցվել է բանագիտական հարուստ նյութ ինքնատիպ տեղագրական, լեզվաբանական, բարբառագիտական առումներով: Անշուշտ, այդ կենսագրությունը բազում երախտավորների անուններով է կերտվել ու կերտվում: Այսօր էլ Արցախի բանահյուսությունը շարունակում է մնալ ուսումնասիրության դաշտում: Այդ իրողությունն է վկայում նորածնունդ՝ «Արցախի բանահյուսությունը» համահավաք ժողովածուն՝ Արմեն Սարգսյանի հեղինակությամբ:

Ժողովածուն հեղինակի՝ երկու տասնամյակ առաջ հղացած ու տարիների ընթացքում կատարած համար ու տքնալի աշխատանքի արդյունքն է: Առանձին ժողովածուներով լույս էին տեսել Ա. Սարգսյանի «Արցախյան հանելուկներ», «Արցախի բանաձևային բանահյուսություն», «Արցախյան ավանդություններ», «Արցախյան զվարճախոսություններ» գրքերը: Ներկայացվող աշխատանքը ընդգրկում է ինչպես վերոնշյալ ժողովածուների նյութերը՝ նոր համալրությամբ, այնպես և հեթիաթներ ու քնարական բանահյուսության նորահայտ նմուշներ:

Բոլոր ժողովածուների կազմության ժամանակ հեղինակը հավատարիմ էր իր նախանշած աշխատանքային ոճին ու դրսարել էր բացառապես գիտական մոտեցում՝ թե՝ նյութերի գրառման, թե՝ դրանց համակարգման նեպքում: Այդ ամենի բյուրեղացումն էլ «Արցախի բանահյուսությունը» համահավաք ժողովածուն է:

Ի սկզբանե հեղինակն առաջնորդվել էր հստակ ծրագրով. ստեղծել այնպիսի աշխատանք, որը պիտի լինի ոչ միայն բանահյուսական ժառանգությունն ամփոփող մի նոր հուշարձան, այլև պիտի դարձնար նաև այդ ժառանգությունը կրող ժողովրդի բարբառի ու լեզվամտածողության ուսումնասիրության գիտականորեն հավաստի ու հուսալի աղբյուր:

Հայտնի է, որ բանահյուսական ժառանգության գրավոր փոխադրումը բարբառի հետ կապված որոշ խնդիրներ էր առաջ բերել: Հիմնականում բանահավաքների կողմից կարևորվել էր գրառվելիք նյութի բանագիտական արժեքը, և գրառված բանահյուսական նմուշներն էլ չէին հավակնում ճշգրիտ արտահայտելու բարբառային, խոսվածքային առանձնահատկությունները: Բանահյուսական գրեթե բոլոր ժողովածուներում նշվում է այդ մասին:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Ա. Սարգսյանի ժողովածուն ինքնատիպ է թերևս նրանով, որ հեղինակի կողմից կարևորվել է գրառվող նյութի թե՝ բանագիտական, թե՝ բարբառագիտական արժեքը: Ու այս ժողովածուում ընդգրկված բոլոր նմուշներն առավելապես արտահայտում են բարբառի համապատասխան խոսվածքների առանձնահատկությունները ու դրանով դառնում նաև տվյալ ժամանակաշրջանի բարբառային իրողությունների վավերագործություն:

Ժողովածուն լիարժեք ամփոփում է առ այսօր կատարված բանահավաքչական մեծ աշխատանքը. հեղինակը նախ՝ գիտականորեն համակարգել է հավաքագրված և առկա բանահյուսական նյութը՝ առաջնահերթելով նյութի բանագիտական ու բարբառագիտական արժեքայնությունը, ապա և այս աշխատությամբ բանահավաքչական գործունեության շարունականությունն ու նրա ուսումնասիրության գիտական ուղղորդվածությունն ապահովել, ինչն առկախ էր մինչ այդ:

Գրքի «Երկու խոսք»-ում հեղինակն ամփոփ տալիս է ժողովածուում ընդգրկված նյութի բնութագիրը: Ըստ որում՝ Արցախի ժողովրդական բանահյուսության շուրջ 8078 բնագիր է ներկայացված սույն աշխատության մեջ: Նյութերը համակարգված են ըստ ժամրային նկարագրի՝ վիզական բանահյուսություն (հերքաթ, ավանդություն, առակ, զվարճախոտություն), քնարական բանահյուսություն (խաղիկներ, չափած այլ կտորներ), ատլյարանական բանահյուսություն (առած-ասացվածք, ամեծք, օրինանք, հանելուկ, մականուն, շուտասեղուկ, հանգախալ): Բոլոր բնագրերը համարակալված ու անձնագրավորված են, խստորեն պահպանված են նյութի գրառման պահանջները: Գիտական հետևողականությամբ պահպանված է նաև յուրաքանչյուր բնագրի բարբառային տառադարձությունը: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր նմուշ գիտական բեռնվածք ունի. այն համապատասխան ուսումնասիրության տարածքում գնահատելի է իր սկզբնադրյուրային արժեքով:

Ժողովածուն ունի ընթերցողին ուղղորդող ընդարձակ առաջաբան, որտեղ տրվում է Արցախի մասին պատմական համարոտ ակնարկ, ներկայացվում է բանահյուսության գրառման պատմությունը, նյութերի բանագիտական վերլուծությունն ու նաև ամփոփ տեղեկություն Արցախի բարբառի հնյունաբառաքերականական առանձնահատկությունների մասին: Կցված ունի բառարան, որի մեջ ընդգրկվել են բարբառային և փոխառյալ բառեր ու դարձվածներ՝ իրենց բացատրություններով:

Հեղինակը ժողովածուի վերջում տալիս է նաև մատենագիտական ցանկ, որն ընդգրկում է Արցախի բանահյուսությանը վերաբերող տպագիր ու ծեռագիր աղյուսությունները: Ըստ էության, ժողովածուն թե՝ Արցախի բանահյուսության արժանավոր ներկայացման լավագույն գործ է, թե՝ բանահյուսության ու բարբառի գիտական ուսումնասիրության իր ժամանակի սկզբնադրյուր:

Ա. Սարգսյանի «Արցախի բանահյուսությունը» կարևոր ներդրում է հայ բանագիտության մեջ, իսկ արցախյան համանուն տարածքում՝ նաև բանահյուսություն ու բարբառագիտություն կապն ապահովող գիտական բարձր արժեքայնությամբ ինքնատիպ աշխատություն, որը զալիք սերունդներին հղվող արժեքների ժամանակության ու պահպանման լուրջ հանձնարարական է:

Լուսինե ՄԱՐԳԱՐՅԱՆ
բ.գ.թ., դոցենտ
ՍՍՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ